ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 փետրվարի 2016թ. թիվ 45-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԵՐԻ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ, ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ, ԾՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հաշվի առնելով Ջբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի 12.02.2016թ. նիստով կայացրած որոշումը (արձանագրությունը կցվում է)՝

Ո ր ո շ ու մ եմ.

Հաստատել 2016 թվականին ՀՀ Լոռու մարզում իրականացվելիք «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերի՝ ըստ համայնքների ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության, ծրագրերի իրականացման և ներկայացման ժամկետների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. փետրվարի 12
ք.Վանաձոր